Նիէլեան, երկրագործական՝ Մ. Զաքարեան, արդարադատութեան՝ Եր. Բաղումց։ Զանգեզուրի կառավարութիւնն էր այս, որ, այնուհետև, ձեռք-ձեռքի ընդհանուր կոմիսարի հետ՝ տարաբ երկրի կազմակերպութեան ու կառավարութեան գործը։ Խորհրդի միւս անդամները զբաղւում էին Ղարաբաղի հարցերով։ Շրջանային Խորհուրդն իր ամբողջութեան մէջ վարիչների գործունէութեան վերին հսկողի դերում էր և շաբաթը մի անդամ նիստ գումարելով՝ լսում էր վարիչների զեկուցումները։

Պէտք է աւելացնել և այն, որ այդ բոլոր աշխատանքները կատարւում էին դրեթէ պատերազմական պայմաններում։ Ապր. 15-ից սկսած մինչև նոյեմբերի վերջը տեղի ունեցան մի շարք լուրջ բախումներ հայերի և թուրքերի միջև Երիցաթումբի, Զէյվա-Հազարիի, Ներքին Հանդի-Նիւաղիի, Նորս-Գոմրիի, Մազրայի, Բազարչայ—Ղուշչի-Բիլագի, Մինքենդ—Խոդնաւուրի և այլն։ Ամէն անգամ կռիւներին մասնակցում էին երկու կողմից 1500—3000 զինուած ուժեր։ Համարեա բոլոր դէպքերում էլ նախայարձակը թուրքերն էին. նրանք էին և չարաչար պարտուողը։ Թուրքերի ձգտումն էր միացնել Զանգեզուրը Ազրբէջանին։

Այս բանին ոյժ էին տալիս և անգլիացիները։ Այսպէս, մայիս 2-ին Շուշիից Գորիս եկաւ անգլիական միսիայի պետ մայոր Մաք Մեդենը և հրաւիրելով Զանգեզուր—Ղարաբաղի Շրջանային Խորհրդի անդամներին՝ արաւ հետևեալ յայտարարութիւն-պահանջը.

1. Ճանաչել Ազրբէջանի իշխանութիւնը՝ երկրում կարգ, իշխանութիւն հաստատելու, ճանապարհները բանալու և ժողովրդին պարէն հասցնելու համար։

2. Ցարմարութիւններ տալ քոչւորներին բարձրանալու Զանգեզուրի լեռները։

Շրջանային Խորհուրդը մայիս 3-ին տուեց հետևեալ դրաւոր պատասխանը.

«Զանգեզուրի առաջին գիւղացիական համագումարի որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետութեան երկրամաս Զանգեզուրի դէմ կատարուած իւրաքանչիւր յարձակողական գործողութիւն կը հանդիպի ամենայամառ և կատաղի դիմադրութեան Զանգեզուրի հայ ժողովրդի կողմից։

Հայաստանի Հանրապետութեան երկրամասում չապրող քոչւորներին ո՛չ մի դէպքում և ո՛չ մի պայմանով չի թոյլատրւում բարձրանալ Զանգեզուրի սարերը։

Ինչ վերաբերւում է իշխանութիւն հաստատելուն, պէտք է ասենք, որ ո՛չ միայն այժմ, այլ և համատարած անիշխանութեան օրերին Զանգեզուրում միշտ թագաւորել է օրինակելի իշխանութիւն, և այժմ հարկ չկայ իշխանութիւն հաստատելու այնտեղ, ուր անիշխանութիւն չկայ։

Ուղիղ երկու տարի է ինչ Զանգեզուրը կտրուած է քաղաքակիրթ աշխարհից, նրա առաջ փակուած են հաղորդակցութեան ճանապարհները։ Զանգեզուրը հաշտուել է այդ հանգամանքի հետ՝ գտնելով, որ իր աղատութիւնը վեր է ամէն տեսակ յարմարութիւններից և կուլտուրական բարիքներից։